Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
հունիսի 24-ի N 1053-Ն որոշման

«Հավելված N 8.1
ՀՀ կառավարության 2014 թվականի
հունվարի 30-ի N 145-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ԿԱՄ ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՆԽԻԿ ԵՂԱՆԱԿՈՎ ՎՃԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են ընտանեկան կամ սոցիալական նպաստների (այսուհետ՝ երկուսը միասին՝ նպաստ) կամ հրատապ օգնության անկանխիկ եղանակով վճարման հետ կապված հարաբերությունները:

2. Նպաստի անկանխիկ եղանակով վճարելը նպաստի գումարը գանձապետական համակարգի միջոցով նպաստ ստացողի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.9-րդ հոդվածի 1-ին մասում նշված սոցիալական ապահովության հաշվին (այսուհետ՝ հաշիվ) փոխանցելն է:

3. Հրատապ օգնության անկանխիկ եղանակով վճարելը հրատապ օգնության գումարը գանձապետական համակարգի միջոցով հրատապ օգնություն ստացողի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.8-րդ հոդվածի 1-ին մասում նշված միանվագ դրամական վճարների հաշվին (այսուհետ՝ հաշիվ) փոխանցելն է:

4. Նպաստը կամ հրատապ օգնությունն անկանխիկ եղանակով ստանալու նպատակով ընտանիքի չափահաս անդամներից մեկը (այսուհետ՝ դիմող) իր բնակության վայրն սպասարկող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի N 582-Ն որոշման հավելվածում ներառված միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) տարածքային կենտրոն (այսուհետ՝ տարածքային կենտրոն) է ներկայացնում գրավոր դիմում, որով ընտրում է Ծառայության հետ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ սոցիալական ապահովության կամ միանվագ դրամական վճարների

հաշվի պայմանագիր կնքած բանկը (այսուհետ՝ բանկ)։ Ընդ որում ներկայացված դիմումը ստորագրվում է ընտանիքի բոլոր չափահաս անդամների կողմից, իսկ հաշիվը բացվում է դիմողի անունով։

5. Դիմողն իրավունք ունի ցանկացած ժամանակ դիմելու տարածքային կենտրոն՝ նպաստը կամ հրատապ օգնությունը ստանալու եղանակը կամ բանկը փոխելու համար։

6. Սույն կարգի 4-րդ կետով նախատեսված դիմումի բացակայության դեպքում նպաստը կամ հրատապ օգնությունը վճարվում է կանխիկ եղանակով։

7. Տարածքային կենտրոնի աշխատողը սույն կարգի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված դիմումներում առկա տեղեկատվությունը ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազա է մուտքագրում դիմումը ստանալուց հետո՝ մեկօրյա ժամկետում։

8. Նպաստն անկանխիկ եղանակով վճարվում է Ծառայության հետ սոցիալական ապահովության հաշվի պայմանագիր կնքած բանկերի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգի կենտրոնական տեղեկատվական բազան շահագործող կազմակերպության կողմից Ծառայությանը տրամադրված էլեկտրոնային ցուցակների հիման վրա։

9. Հրատապ օգնությունն անկանխիկ եղանակով վճարվում է Ծառայության հետ միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագիր կնքած բանկերի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 287-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգի կենտրոնական տեղեկատվական բազան շահագործող կազմակերպության կողմից Ծառայությանը տրամադրված էլեկտրոնային ցուցակների հիման վրա։»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

24.06.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ